



“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ” ԴՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ ԺԳ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 1, 1884

ԹԻԻ 7



ՀՐԵՂԷՆ ԾՈՎՈՒ ՄԷՋ  
ՆԱԻԱՐԿՈՒԹԻՒՆ

Յամաքի վրայ բաց տեղ ճա-  
նապարհորդողի համար գեղե-  
ցիկ տեսարան է գիշերուան  
մէջ անցնել դաշտէ մը ուր օդը  
լի է բիւրաւոր փոսուռաներով  
(աթէշ պէօճէշի) : Բայց անոնք  
որ նաւով կը ճանապարհորդեն՝  
երբեմն կը հանդիպին այնպիսի  
տեսարանի մը որոյ նմանը չտես-  
նուիր երբէք ջամաքի վրայ ,  
այսինքն ծովուն երեսը կ'երևի  
իբր բորբոքեալ հրով : Ասոր  
պատճառ են բիւրաւոր մանր  
մանր հրաշէկ ձկունք որ մերկ  
աչօք չեն տեսնուիր :

Անգղիացի եկեղեցական մը ,  
մինչ կը նաւարկէր Հնդկաց ու-  
կիանոսին մէջ, գիշեր մը կոչուե-  
ցաւ վեր նաւին տախտակամա-  
ծին վրայ տեսնել հրեղէն ծով  
մը որուն մէջէն կ'անցնէր նա-  
ւը : Լուսին չկար և գիշերն էր  
աղջամրղջին , բայց և այնպէս  
լոյս էր ինչպէս տուրնջեան ա-  
տեն : Նաւին որ կողմէն և նայ-  
ուէր , առջևէն , ետևէն , վրա-  
յէն , քովերէն , ծովին երեսը ,  
մինչև ուր և կը հասնէր աչաց  
տեսութիւնը , կը տեսնուէր  
հրաշէկ բոցակէզ : Եկեղեցա-  
կանն աճապարեց իջնել իւր  
սենեակը , և բերելով մանր  
գրով Աստուածաշունչ մը՝ սկաւ  
գիւրաւ կարգալ բարձրաձայն :  
Ընկերն ըսաւ թէ , նաւը որ ժա-  
մը տասը մղոն կ'երթար , աւելի  
քան մի ժամ էր որ կ'անցնէր  
այն բոցեղէն ծովէն :

Եկեղեցականն ուղերթով գըա-  
նել այս երևոյթին գիտնական  
պատճառը , գոյլ մը շուր առաւ

ՀՐԵՂԷՆ ԾՈՎՈՒ ՄԷՋ ՆԱԻԱՐԿՈՒԹԻՒՆ

այն հրեղէն ծովէն նաւին մէջ, և տեսնելով ջուրին մէջ մանր մանր մարմիններ իբրև կրակի կտորներ, մատին ծայրովն առաւ անոնցմէ և դրաւ թաց թաց ապակեոյ կտորի մը վրայ, և հետեւեալ առաւօտուն տեսաւ ապակեոյն վրայ մանր մանր կէտի նման արատներ: Այս արատները զննելով խոշորացուցիւ՝ տեսաւ որ էին իւրաքանչիւր շատ փոքրիկ ձուկ մը, հարկաւ մեռած, ձևով նման ծովու խեցգեանիկներու (Pisces): Եկեղեցականը գծեց ասոնց միոյն պատկերը քան զբնականն աւելի մեծ: Թէ կան արդեօք ուրիշ ձև ճճիներ որ կը լուսաւորեն ծովը, չէր գիտեր: Բայց այն անասնիկները որ այն գիշերով կիանոսն ըրին հրեղէն ծով, որուն ակնատես եղաւ ինք, էին արդարև մանր ձկուներ, գլխով, սրունիւք և փայլուն մարմնով նման ծովու խեցգեանիկներու:

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ

Քանի մը տարի առաջ վեց փոքր տղայք, որոց երիցագոյնն ինն տարեկան էր և միւսներուն իւրաքանչիւրն հինգ տարեկանէն վար էր, կը խաղային Անգղիոյ քաղաքներէն մէկուն ծովեզերքը: Ասոնք մտած էին մին այն փոքր նաւակներէն որ դրեթէ միշտ կը գտնուին ծովեզերքը: Եւ մինչ կը զուարճանային նաւակին մէջ, անմիտ և չար տղայ մը ականջ չկախելով նոցա աղաղակին և սարսափին, հրեց նաւակը որ դէպ ովկիանոս զնաց:

Անհնար է նկարագրել այն փոքրիկ տղոց մարց տաղնապը, երբ իմացան թէ ինչ պատահած էր, և այս տագնապն երթալով յուսահատութեան կը յանդէր, վասն զի օրը երեկոյ ըլլալով գիշերուան ժամերը վրայ կը հասնէին, և կորսուածներէն լուր մը չառնուեցաւ, թէ և մարդիկ նաւակներով ծովուն վրայ ամէն կողմ զանոնք փնտռելու ելան:

Հետեւեալ առաւօտուն կանուխ, մերձակայ քաղաքէն ձկնորս մը իր նաւակէն բան մը նշմարեց ջուրին վրայ: Նաւակն ուղեց դէպ այն կողմը, և մտնալով տեսաւ որ նաւակ մ'էր այն, որուն մէջ վեց փոքր տղայք իւրարու քով պառկած էին, ինչպէս թռչունները իրենց բոյնին մէջ կը պառկին: Ո՛չ պահեց զանոնք: Այն սիրելի էակը, որ կը հսկէ ամենուն վրայ, բնաւ իւր աչքը չէր գարձուցած այս սիրուն մանկանց վրայէն. և անոնց բոլոր սարսափն ու արամուծիւնը մտնալ տուած էր անոյ ջնոյ մէջ ընկրղ-

մերով զնոսա: Բարի Աստուածը պահած էր զանոնք:

Ձկնորսին ձայնը զանոնք արթնցուց, և նորա իրենց աչուրները բանալով տեսան անոր խորշովեալ բայց զուարթ երեսը: Մանկանց երիցագոյնը կրցաւ պատմել թէ ի՛նչ պատահած էր իրենց: Ձկնորսը զանոնք իւր նաւակն առաւ, անոնց կերակուր տուաւ, և անոնց սրտերը ուրախութեամբ լեցուց խոտանալով որ իրենց տունը պիտի տանէր զանոնք: Տղայք նաւահանգրտէն քանի մը ժամ հեռացած էին: Կէս օրն երեք կամ չորս ժամ անցած էր, երբ ձկնորսին նաւակը ծովեզերքէն տեսան հսկող աչքեր, և անոր ետէն ուրիշ նաւակ մը: Վերջապէս դիտակներու օգնութեամբ հրակողներն ստուգեցին թէ այն նաւակն էր որ նաւահանգրտէն անյայտ եղած



ՄՈՆԿՈՒԹԻ ԵՂՐԱՐ

էր: Բայց տղայք: Արդեօք հո՞ն էին անոնք: Ի՛նչ տազնապալից վայրկեաններ էին անոնք ոչ միայն տղայոց հարց և մարց, այլ և ամենուն համար, քանզի ամէն մարդու սիրտ կը բաբախէր համակրութեամբ դէպ ի մանկիկները:

Կամաց կամաց նաւակը դէպ ի ծովեզերքը եկաւ, վերջապէս անյայտ մտեցաւ որ ձայն կրնար հասնել: «Բոլորն ալ ապահով են», աղաղակեց բարեսիրտ ձկնորսը, և այս աղաղակը բաղմութեան մէջ արձագանգ տուաւ. «Բոլորն ապահով են, բոլորն ապահով են»: Հուժկու մարդիկ իրենց զլուխները խոնարհեցուցին և հեկեկանօք լացին առ ուրախութեան: Կանայք իրենք զիրենք մտեցած էին, և չափազանց ուրախութեան չէին գիտեր ինչ ընել: Երախտագիտութեան և շնորհակալութեան աղօթք մը, որոյ անկեղծութեանը ոչ ոք կրնար տարակուսել, վերաբարեցաւ անոնց սրտերէն առ ամենօրհնեալ և բաղմողորմ Աստուած, որ փոքրիկ տղայքը պահած էր այն սոսկալի գիշերուան արհաւիրքէն:

Ձեզի այնպէ՛ս կը թուի թէ դժուար պիտի չըլլար ճշմարիտ երախտագիտութեան աղօթք մը մատուցանել այնպիսի նշանաւոր ազատութեան մը համար: Բայց մենք պատճառներ ունինք ամէն օր երախտագիտական աղօթքներ մատուցանելու: Ո՛չ ապաքէն դուք երբեմն կը մոռնաք, որ եթէ մեր երկնաւոր Հօրը գորովազուժ խրնամքը մէկ վայրկեան դադրի մեր վրայէն, մենք կը մեռնինք: Ոչ ապաքէն կը մոռնանք թէ շատ անգամ վիշտեր, փորձանքներ և նեղութիւններ միշտ մեզ ամենուս մօտն են, և ամէն բան որ մենք հիմա կը վայելենք, անոր համար է որ մեր Հայրը կը սիրէ զմեզ:

Տղայոց կորսուելուն և գտնուելուն այս պատմութիւնն ազգու պատմութիւն է: Բայց, սիրելի՛ ծաղկահասակ ընթերցող, եթէ դուն քիչ մը խորհելու ըլլաս, վստահ եմ թէ պիտի համոզուիս որ դու պէտք չունիս զարմանալի ազատութեանց ազգեցիկ պատմութիւններ փնտռելու որպէս զի սրտիդ մէջ առ Աստուած երախտագիտութիւն ծագի: Չայդ յառաջ բերելու փաստեր և պատճառներ շատ են քու չար գիտ: Մնաց մն է նոյն իսկ շնորհայտ շունչը զոր հիմա ազատութեամբ կը շնչես: Եւ անոնք բոլորը Աստուծոյ սիրոյն և խնամոց նշանն ու արդիւնքն են: Եւ թող անոնք առաջնորդեն քեզ դէպ ի հոն ուր այսպիսի խորհուրդք տանելու են մեզ նման անօգնական, կախում ունեցող և սակայն գորովալից խնամք վայելող էակներ:

Պարտիզակ  
Թարգմանեց Ս. Գ. Գ. Գ. Գ.  
Վ. ԵՐՈՆԻՔԱ  
Ս. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՕԴԱՊԱՐԿԻ ԳԻՒՏԸ

Հարիւր տարի առաջ օդի մէջ ճանապարհորդելու գիւտն առաջին անգամ յաջողութեամբ ի դործ գրուեցաւ խումբ մը գիտուն մարդոց առջև հարաւային Գաղիա: Օդապարիկ մը ի հիացումն մեծ բաղմութեան ակնաստեսաց թռչելով ելաւ ամպերէն վեր: Ստեփան և Յովսէփ Մոնկոլֆիէ եղան այս մեծ գիւտին հեղինակներ, և գործը չէր ըլկ փորձ, այլ գիտնական սկզբանց վրայ հիմնուած: Այս երկու երիտասարդ եղբարք հմուտ էին ուսողութեան, բնագիտութեան և տարրաբանութեան: Օդազնաց ճանապարհորդութեան վրայ գիտնական գրուածներու մէջ կարգացած էին այս մասին շատ անօգուտ փորձերու պատմութիւնը, բայց իրենց

սկզբան նայելով վստահ էին թէ, օգտաւորիկ մը, եթէ ըստ պատշաճի շինուէր և լցուէր, կրնար յաջողիլ:

Մոնկոլֆիէ եղբարք էին արուեստիւ թղթագործ, և իրենց հօրմէն ժառանգած էին այս արուեստին գործիները. ուստի նախ խորհեցան թուղթէ շինել օգտաւորիկը, և շինեցին խակ, և լեցուցին զայն ջրածին կազով, բայց փորձը չյաջողեցաւ, վասն զի կազը խոյս տուաւ օգտաւորիկին ծակախներէն: Յետոյ խորհեցան ծխով ուռեցունել օգտաւորիկը: Մետաքսէ օգտաւորիկ մը որ տակէն բացուած մը ունէր՝ բռնեցին վառած թուղթի վրայ: Թուղթին ծուխը և նուրբ օդն ուռեցուց օգտաւորիկը որ սկսաւ վեր ելլել, և բարձրանալով մինչ եօթմանասուն և հինգ ոտք՝ կեցաւ, և յետոյ սկսաւ մեղմով իջնել:

Այս փորձը եղաւ արգարե բաւական գոհացուցիչ: Այնուհետև յիշեալ եղբարք մեծցուցին օգտաւորիկը զոր շինեցին կառուէ և ներսէն պատեցին թղթով: Օգտաւորիկը դարձեալ բռնուռեցաւ կրակի վրայ մինչև լցուի ծխով և անօդայեալ օդով, այնպէս որ երեք մարդ հազիւ կրցան բռնել զայն: Երբ օգտաւորիկը թողուեցաւ, երաւ վեր արագութեամբ և եղաւ տներուց շէջ: Գիւտին համբաւը տարածուեցաւ ուրիշ քաղաքներ, և երկու եղբարք հրաւիրուեցան կառավարութենէն նոր փորձ մը ընել հրապարակաւ: 1783, Սեպտեմբեր 19 ին վէրսայի պալատին առջև եղաւ այս փորձը: Օգտաւորիկին տակէն կոխուած կողովի մէջ գրուեցան ոչխար մը, աքաղաղ մը և բազ մը: Օգտաւորիկը որ մինչև ցայն վայր շինուածներուն մեծագոյնն էր՝ էր եօթմանասուն և հինգ ոտք բարձր, և քառասուն և երեք ոտք լայն: Օգտաւորիկն ուռեցունելն սկսաւ կէս օրէն ժամ մը ետքը: Մետասան բոպէի մէջ ուռեցաւ օգտաւորիկը, չուանները կտրուեցան և օգտաւորիկն սկսաւ մեղմով ի մեծ հաճութիւն տեսողաց բարձրանալ գէպի վեր, մինչև հասաւ հազար հինգ հարիւր ոտք բարձրութեան, և ապա իջաւ երկու մղոն հեռու այն տեղէն ուր ելած էր: Մէջը դրուած անասուններուն ամենեւին վնաս հասած չէր: Օգտաւորիկն իջնելէն ետքը ոչխարը կողովին մէջէն երած էր և հանգարտութեամբ կ'արածուէր հոն դաշտին վրայ, և ամենեւին չէր վնասուած այն ահաւոր օգտաւորաց ճանապարհորդութեան երկիւղէն: Այս յաջողութեան վրայ շատ ուրախ էին երկու եղբարք,

որ իրենց այս գիւտին միջոցաւ հասկըցան, ինչպէս յետոյ ուրիշ օգտաւորացութեան ասէն ևս ստուգուեցաւ, թէ բոլոր մթնոլորտին մէջ մինչև մեծ բարձրութիւն մը հովի հոսանք կ'անցնին իրարու վրայ հակառակ ուղղութեամբ:

Նոյեմբերի 21 ին Յովսէփ շինեց աւելի զօրեղ և աւելի դիւրավար օգտաւորիկ մը, և գրեթէ բոլոր Բարիզ կեցաւ ականառես այս փորձին: Այս անգամ օգտաւորիկը պիտի տանէր Գաղիական բանակէն Սրբանտի մարդիկը որ ունէր իրեն հետ երիտասարդ բնագէտը Բիլադըրը աը Բոչիէ, և լի աւազով սեղան մը և յարդ՝ կըրակն արժարձերու համար: Այսպէս երկու քաջ ուղևորք հեծան օգտաւորիկը, չուանները թողուեցան և օգտաւորիկը բարձրանալով օդին մէջ հազիւ կըրտեսնուէր իբր կէտ մը ամպերէն վեր, մինչ օգտաւորիկն կառու բացուեցաւ և կրակը մտաւ մէջը զոր հազիւ կրցան մարել, և օգտաւորիկն սկսաւ տակաւ իջնել: Այս ճամբորդութիւնը տեւեց քսան և հինգ բոպէ: Երկու օգտաւորացը համարուեցան իբրև ժամանակին առիւծները, և բանիւ և գրով կը պատմուէր ամէն տեղ անոնց քաջութիւնը և աներկիւղ համարձակութիւնը: Օգտաւորիկն հնարիչները Մոնկոլֆիէ եղբարք շատ անգամ պատուանշաններ առին Գաղիոյ կառավարութենէն և իւրաքանչիւրը՝ թուղթի ցիւցանա, նաև քառասուն հազար ֆրանքի գումար մը գրուեցաւ անոնց հրամանին ներքև նոր փորձերու ծախուց համար:



ՕՊԱՊԱՐԿ

պարիկը բարձրանալով օդին մէջ հազիւ կըրտեսնուէր իբր կէտ մը ամպերէն վեր, մինչ օգտաւորիկն կառու բացուեցաւ և կրակը մտաւ մէջը զոր հազիւ կրցան մարել, և օգտաւորիկն սկսաւ տակաւ իջնել: Այս ճամբորդութիւնը տեւեց քսան և հինգ բոպէ: Երկու օգտաւորացը համարուեցան իբրև ժամանակին առիւծները, և բանիւ և գրով կը պատմուէր ամէն տեղ անոնց քաջութիւնը և աներկիւղ համարձակութիւնը: Օգտաւորիկն հնարիչները Մոնկոլֆիէ եղբարք շատ անգամ պատուանշաններ առին Գաղիոյ կառավարութենէն և իւրաքանչիւրը՝ թուղթի ցիւցանա, նաև քառասուն հազար ֆրանքի գումար մը գրուեցաւ անոնց հրամանին ներքև նոր փորձերու ծախուց համար: Գրեթէ հարիւր տարի է որ ստէպ փորձեր կ'ըլլան օգտաւորիկն յարմար

ընելու ճանապարհորդութեան օգոյ մէջ, մանաւանդ պատերազմներու ժամանակ, բայց գիւտը չզնայ աւելի յառաջ, այլ մնաց գրեթէ այն վիճակին մէջ յորում թողին զայն Մոնկոլֆիէ եղբարք: Միայն հիմա օգտաւորիկն ուռեցունելու համար կը գործածուի կազ:

Մեծագոյն բարձրութիւնը յոր հասած է մինչև ցարդ օգտաւորիկը՝ է 37,000 ոտք կամ եօթն մղոն, և ելլալուն էին, 1862, սեպտ. 3 ին, կլէշեր և Բօքսսիլէ:

ԱՆԳՈՒԹ ՏՂԱՅ ՄԸ

Յակոբ անուն տղայ մը հաճոյք կը զգար թռչնոց բոյներ վնասելէ: Երբ հակիթներ կը գտնէր, զանոնք կը կտորէր, և դեռ նոր թխուած թռչնիկները բոյնէն դուրս կը նետէր, այնպէս որ, խեղճերը կամ ինկած ժամանակ կը սպաննուէին և կամ անօթութենէ կը մեռնէին: Յակոբայ հայրը շատ անգամ կը յանդիմանէր զնա այս անդուծ գործին համար և կ'ըսէր. «Նոքա որ հաճոյք կը զգան կենդանիները չարչարելէ, կը ցուցնեն թէ չունին դժոտ սիրտ և անզգայ են իրենց նմանեաց թշուառութեանցը»:

Յակոբ օր մը կը զբօսնուր վուշի մը ծայրով խայթելով և կուրցունելով փոքրիկ սարեկաց աչքերը, որք դեռ նոր սկսած էին փորձել իւրեանց թեւերը. և կը զուարճանար տեսնելով նոցա անօդուա ջանքերը վազելու և թռչելու համար: Նոյն վայրկենին Յակոբայ մայրը վրայ հասնելով ըսաւ արտասուալից աչօք. «Որդեակ, եթէ չձգես այդ անդուծ բնաւորութիւնդ Սասուած պիտի պատժէ զքեզ»:

Կիրակի առաւօտ մը Յակոբ անտառը գնաց փոխանակ եկեղեցի երթալու: Տեսնելով մեծ բոյն մը բարձրաբերձ կաղնոյ մը վրայ, ծառին գազաթն ելաւ և սկսաւ դուրս նետել այն բոլոր թռչնիկներն զորս հոն գըտաւ: Երբ կը պատրաստուէր երկրորդ բոյն մը արել, թռչնիկներուն հայրն և մայրը, զիշատիչ և սուկալի թռչուններ, որք դացած էին իւրեանց ձագերուն համար կերակուր վնասել, խոյացան անոր վրայ: Անդուծ տղան բոլորովին սարսափած ուղեց ածապարանօք ծառէն իջնել, բայց թռչունք կաուցի հարուածներով փորեցին նորա աչքերն մինչ նա չէր կտրող ինքը պաշտպաներ սրովհետև յայն

ժամ իւր երկու ձեռացը պէտքն ունէր վար չիյնալու համար :

Յակոբ ոչ միայն կուրացաւ , այլ նաև բոլոր կենացը մէջ թշուառ եղաւ : Իւր ծնողաց մահուանէն ետքը սկսաւ մուրալ իւր հացը ճարելու համար , նաև հայրենիքէն հեռացաւ : Այն մարդիկ որք զիտէին Յակոբայ այնչափ չար լինելն՝ երբէք դուր չէին ցուցընէր անոր : Յակոբ աստուածաւառք պատահաս համարելով թշուառութիւնը որուն ասկ կ'ընկճէր , չէր դադարեր երբէք պատմել իւր ցաւալի պատմութիւնն այն տղայոց որք 'ի դուր չարժեղով կ'օգնէին անոր , որպէս զի անոր օրինակէն խրատ առնուին :

Թարգմանեաց Դպրէրէնէ  
Ա.ՋԱՐ Ե. Ա.ՋԱՐԵԱՆ

Պարտիզակ  
Յունիս 9 , 1884

Ս Կ Ի Ի Ռ

Այս գեղեցիկ անասունը շատ չգանուիր թուրքիս , բայց Ամերիկայի մէջ կան անոր շատ տեսակները , կարմիր , դորչ և սև : Սկիւռը կ'ուտէ կաղին և ցորեն , և իւր բոյնը կը շինէ ծառի փապարնէրու կամ ոստերու մէջ : Մինչդեռ ձագէ , զիւրաւ կ'ընտանենայ և սիրելի կ'ըլլայ տղայոց : Ամերիկայի բանակէն սպայ մը այս անասնոյն վրայ կը գրէ այսպէս :

«Սպասաւորս օր մը ջրոյ համար երթալով աղբիւր մը , բարձր ծառի մը վրայ տեսաւ այս անասնոյն բոյնը : Մարդը ելաւ ծառը , և գտնելով բունին մէջ գորշագոյն սկիւռի երկու կամ երեք սիրուն ձագեր , անոնց մին բերաւ առ իս : Քանի մը ժամու մէջ անասնիկն ընտանեցաւ և կը խաղար կատուի ձագի պէս . չէր ջանար փախչել , այլ կը կենար վրանիս մէջ ինծի հետ : Կաղին քաղելով կը գնէի գրպանս : Փոքրիկ բարեկամս սորվեցաւ սողակելով ելլել վրաս , և գըրպանս մանելով կ'առնուր կաղինները և նստելով գրպանիս քով կ'ուտէր զանոնք ախորժեղով : Երբեմն մեղմով մտնելով գրպանիս մէջ կը քնանար ,

և ես կը թողուի զնա այնպէս , երբեմն կ'ելլէի պատեղ ունենալով զնա գրպանիս մէջ : Բանակը զնաց քանի մը օրուան ճամբոյ հետու , և փոքրիկ սկիւռը դարձեալ չմեկնեցաւ , այլ եկաւ հետս : Հոն վրանս կանգնեցի բարձր կիճնոյ մը տակ , և սկիւռիկը կ'ելլէր ծառին վրայ , բայց այնպէս հնազանդ էր ինձ , որ երբ կը կոչէի , խնայն կ'իջնէր ծառէն , և գիշերը երբ հանդերձս կը կախէի ձողէ մը վրանին մէջ , սկիւռը կ'ելլէր և կը պառկէր հանդերձիս գրպանին մէջ : Օր մը ուրիշ սկիւռ մը այցելութիւն ըրաւ

ոմանք երկայն ձող մը առնելով կը թափէին տերևները , տեսնելու համար թէ ինչ պիտի ընէին երկու փոքրիկ բարեկամք : Ասոնք առանց վարանելու խնայն կ'ընտրէին ուրիշ ճիւղ մը , և փութով կը շինէին իրենց ուրիշ անկողին մը :

Կը խորհէի տուն բերել սկիւռս ի դարձիս , բայց բանակէն ելլելէս քանի մը օր առաջ անյայտ եղաւ նա : Կարծեմ թէ ուրիշ մը գողցաւ զնա : Ողբայի անասնիկն , ինչպէս աղջիկ մը կ'ողբայ իւր մեռեալ սիրուն գեղձանիկը , և թէպէտ արդէն քսան տարի է , դեռ կը յիշեմ այն քաղցր ժամերը զորս կ'անցունէի դիտելով իմ սիրելի փոքրիկ բարեկամիս դուարթութեամբ խաղալ և խայտալը :

ՀԱՆՆԵԼՈՒԿ

Կուսանաց վանք մը ունէր քառակուսի սենեակներ թուով 8 , այնպէս շինուած իրարու քով որ ճիշդ քառակուսի մը կը կազմէին : Վանքին մէջ կային 24 կուսանք , որք երեք երեք դրուեցան իւրաքանչիւր սենեկի մէջ : Վանքին արբասուհին սովոր էր սենեկաց իւրաքանչիւր կարգին մէջ 9 ականկոյս դնել : Վանքը 4 կոյսեր ևս եկան , բայց կոյսերն այնպէս բաժնուեցան սենեկաց մէջ որ իւրաքանչիւր կարգին մէջ դարձեալ 9 կոյս կը գտնուէր : Յետոյ կոյսերէն 8 մեկնեցան վանքէն , և դարձեալ սենեկաց իւրաքանչիւր կարգին մէջ 9

կոյս կը գտնուէր : Յիշեալ 8 կուսանք կրկին եկան վանքը իրենց հետ բերելով 4 կոյսեր ևս , և ասոնք այնպէս բաժնուեցան սենեկաց մէջ որ դարձեալ իւրաքանչիւր կարգ կը պարունակէր 9 կոյս :

Աւետաբեր կարգացող տղայոց կ'առաջարկուի գտնել թէ մէկ կարգին մէջ քանի սենեակ կար , և թէ քանիկան կոյս դրուեցան իւրաքանչիւր սենեկի մէջ երկրորդ , երրորդ և չորրորդ բաժանման աստե՛ն , որ ամէն անգամ 9 կ'ըլլար սենեկաց իւրաքանչիւր կարգի կուսանաց գո՛ւմարը :

Ամերիկայի Միսիսսիպի ընտանեկան կոյուղի  
Թիւրքիս  
Ֆիլանթրոպիկ Կոլեջ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒՐՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՏԱԿՈՒՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՐՍ



ՍԿԻՐ